№ 19, Հրատարակութիւն Հայոց Կրթասիրաց

ՀԱՐՑԱՐԱՆ

ԳՐԱԿ I

ՀՈՂԱՑԻՆ ԽՆԴԻՐ

ԿԱԶՄԵՑ

Ս. ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԷԱՆ

Կ. ՊՕԼԻՍ

1909

ՍՏՈՒԳՎԱԾ է 1961 թ.
ՏԱՇԿԱՍՏԱՆԻ ՀԵՂԱԿԵԱՆ Մ-ՂԵՐԻ
19 09
ԳՈՐԾԱԴԻՐ ՑԱՆՁՆԱԽՈՒՄ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Գիւղական հասարակութեան մէջ սոցիալիստական պրոպագանդան յաջող կերպով յառաջ մղելու համար՝ հարկաւոր է ի մօտոյ ճանաչել գիւղացուն և նրա ստիպողական պէտքերի ու թշուառութիւնների մասին որոշ տեղեկութիւններ ունենալ. — իսկ այդ կարելի է՝ հողային խնդիրները և սրանց հետևանքը եղող գիւղացիական փոխադարձ յարաբերութիւնները նախապէս լաւ ուսումնասիրած լինելով։

Սոցիալիստական պրոպագանդան ա՛յլ կերպով յառաջ պէտք է տանել քաղաքներում և ճարտարագործական կեդրոններում, բոլորովին ա՛յլ՝ գիւղերում։

Ճարտարագործական միջավայրերում՝ մարդու շահագործումը մարդու ձեռքով ա՛յնքան ցայտուն, ա՛յնքան կարկառուն կերպով է երևան գալիս, որ պրոպագանդիստի գործը մի առանձին դժուարութեան չի բաղխում։ Բաւական է մի քանի խօսքով վերլուծել կեանքը և իրականութիւնը, որի մէջ որ լողում է իր աշխատանքի ոյժը ծախողը, որպէսզի ընկերային յեղափոխութեան անխուսափելիութիւնը եւ արդարութիւնը հրամայական դառնի։ Ու այդպիսի միջավայրում տիրապետող թէզերը պիտի լինին՝ սովամահութիւն բերող վարձադներ, աշխատանքի ժամեր, գործարանական կանոններ, կանանց և երեխաների աշխատանք, տիրոջական շահագործում (յաւելեալ – արժէք), գործադուլ, գործաթող, դասակարգային կռիւ, եւայլն։

Խնդիրը տարբերւում է գիւղական շրջաններում։ Սոցիալիստական նախեզրերը և պատմութեան նիւթապաշտական հասկացողութիւնը միշտ իրեն ուղեգիծ առնելով՝ պրոպագանդիստի նախասիրուած նիւթերը պիտի լինեն՝ հողային սեպհականութեան նախնական և ժամանակակից ձևեր, խոշոր հողատիրութիւն, վարձակալութիւն, մարաբայութիւն, փոքր սեպհականատիրութեան կացութիւն, հողային գրաւադրումներ,

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
Ֆ. Ի. ՊՍՍԵՆՏՍԼ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

վաղնջուկ դարձառութիւններ, երկրագործական բանկաներ, հողերի մշակութեան նորագոյն մեթոդներ, եւայլն։ Պրոպագանդիստը այստեղ որոշ կերպով պէտք է հասկացնի հողերի կապիտալիզացիայի պրոցեսը, ինչպէս և հողային սեպհականութեան յաւար, բայց յանուն եւ անխուսափելի կեդրոնացումը: Նա՝ ինչպէս քաղաքացի պրոլետարիատին, նոյնպէս և գիւղական մանր սեպհականատէրերին, մարաբաներին և երկրագործական գործաւորներին փաստացի կերպով ցոյց պիտի տայ, որ միայն և միայն սոցիալիզմի տիրապետութեամբն է, որ վերջ պիտի գտնի շահագործումը և՛ գիւղական շրջաններում։ — Աշխատաւորները իրենց աշխատանքի պտուղը լի ու լի կարող են վայելել միայն այն ժամանակ, երբ արտադրութեան գործիքները սեպհականութիւն կը լինեն հաւաքականութեան,— ահա՛ եզրակացութիւնը, որին հաւասարապէս պիտի յանգին բոլոր շահագործուողները՝ ինչ միջավայրի մէջ էլ, որ լինին։

Արդ, պարզ է, որ գիւղական պրոպագանդիստի գործը աւելի դժուար, աւելի բարդ է, և նրանից աւելի մեծ չափով պատրաստութիւն է պահանջում։

— «Եթէ ընկերային խնդիրը մէկ է և դա, իր վերջնական ձևի մէջ, ո՛չ այլ ինչ է, եթէ ո՛չ կապիտալիստական սեպհականութեան ձևափոխութիւնը ազգային կամ հաւաքական սեպհականութեան, հասկանալի է, ուրեմն, թէ ինչո՛ւ այդ խնդիրը բարդ ձև է առնում մի կարգ երկրորդական այնպիսի խնդիրների պատճառով, որոնք իրարուց տարբերւում են միջավայրերի և անհատների ճարտարագործական, երկրագործական և վաճառականական դրութեան համաձայն»։

Պօլ Լաֆարգի այս խօսքը գիտական ճշմարտութիւն է, մասնաւորապէս հողային խնդիրների նկատմամբ։

Ու պրոպագանդիստը ամենամեծ սխալը գործած կը լինի, երբ միջավայրերի առանձնայատուկ պայմանները կանխապէս ուսումնասիրած, ճանաչած չի լինիլ:

Մի միջավայրի համար կազմուած ծրագիրը ո՛չ միայն չի կարելի կիրարկութեան մէջ դնել մի ա՛յլ միջավայրի մէջ, ուր երկրագործական, ճարտարագործական, տնտեսական բոլորովին

ուրիշ պայմաններ կան, այլ և աղետալի սխալ իսկ կլինէր նրանով առաջնորդուիլը։ Այդ մասին կասկած անգամ չի թողնում Կաուցկին։ Ահա իր խօսքերը։

«Բացարձակապէս անկարելի կլինէր հողային (ագրարային) միակ ծրագիր մշակել միջազգային ամբողջ Սոցիալ-Դէմօկրատիայի համար, մի ծրագիր՝ որ կարելի լինէր կիրարկութեան մէջ դնել թէ Անգղիայում, թէ Իտալիայում, թէ Նորվեկիայում, թէ Ռուսաստանում և թէ Բելգիայում։ Եւ նոյն իսկ շատ դժուար պիտի լինէր հողային միակ ծրագիր մշակել մի մեծ տէրութեան համար։ Եւ արդարև ես չեմ հասկանում թէ ինչպէս Պրուսիայի և Մեկլեմբուրգի համար կազմուած մի ծրագիր կարող էր պատշաճիլ Վիւրթեմբէրգին, Բադէնի դքսութեանը, ինչպէս և Լոմբարդիային ու Սիկիլիային։»

Եւ ահա՛ մեր միջավայրը մանրակրկիտ կերպով ուսումնասիրելու նպատակով է, որ կազմուած է այս ՀԱՐՑԱՐԱՆԸ։ — Դրած հարցերին պէտք է աշխատիլ ճշդութեամբ պատասխանել, ամէն ինչ, յայտնի բան է, տեղական պայմաններին նկատմամբ։ Մենք դիտմամբ չօշափած ենք շատ հարցեր, որոնք թէև դեռ շատ մեծ ծաւալով գոյութիւն չունին մեր իրականութեան մէջ, բայց ցոյց են տալիս այն ուղղութիւնը, որ առել են երկրագործական խնդիրները, — ինչ որ պրոպագանդայի նիւթ էլ կարող է լինել ընկերներին։ —

Ուսումնասիրութեան ժամանակ առանձնապէս ուշադրութիւն պէտք է դարձնել տեղական յատուկ պայմանների վրան։

Մի ժողովուրդ, մի դասակարգ լաւ ճանաչելու համար՝ պէտք է այն բաղմակողմանի կերպով ուսումնասիրութեան ենթարկել և ստացած եզրակացութիւնները մի քանի անգամ վերստուգել, — այդ պայմանով է, որ ճշմարտութեան և իրականութեան կարելի է մօտենալ։

15 Ցունիս, 1909 Ս. ՕԱՊԱՀ-ԳԻԻԼԵԱՆ
Կ. Պոլիս

Հողատիրական Հարցեր

ՀՈՂԱՅԻՆ ՍԵՊՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ա. — Պատմական համառօտ տեղեկութիւններ տուեցէք այն մասին, թէ ձեր շրջանի հողատէր սեպհականատէրերը ինչ կերպով են ձեռք բերել իրենց անշարժ կայքերը՝ վարելահողեր, արօտատեղիներ, անտառներ, այգիներ, և այլն։ — Ձեր տեղեկութիւնները աւելի մանրամասնեցէք խոշոր հողատիրութեան նկատմամբ։

Բ. — Ձեր շրջանում ինչքան հողատէրեր կան, որոնց հողային սեպհականութեան տարածութիւնը լինի՝

1 դեսիատինից քիչ։
1–10 դեսիատին։
1–50 »
50–100 »
100–1000 »
1000–10,000 և այլն։ (*)

Խոշոր, Միջին և Փոքր հողատիրութիւնները հողային ինչ տարածութիւններից են կազմուած համարւում՝ ընդհանրապէս, — այդ մասին աւելի հարց ու փորձ արէք գիւղերում. տուեցէք թիւը այդպիսի հողատէրերի, շրջանի անունը և բնակիչների ընդհանուր թիւը։

(*) Տարածութեան այդ չափերը կարող էք տալ նաև փութի, խալվարի, սօմարի, կօտի, էօլչէքի, քիլէի, արտավարի և օրավարի հաշուով, նայելով թէ որ տեղի համար ինչ չափ է գործածւում։

Գ. — Ո՞րքան էր սեպհականատէր հողատէրերի թիւը, ձեր ուսումնասիրած շրջանի մէջ, սրանից 5, 10, 20 և 30 տարի առաջ։

Այդ մասին կարող էք օգտուել չինական դատարանների, թափու մէմուրիի, միջնորդ դատաւորների, երկրագործական հաստատութիւնների և հողային խընդիրների վերաբերեալ մատեաններից։

Դ. — Խոշոր, Միջին և Փոքր հողատէր սեպհականատէրերը ի՞նչքան կալուածատուրք են վճարում. ի՞նչ եղանակով և տարին քանի անգամ։

Ե. — Ձեր շրջանում ի՞նչ ուղղութեամբ է զարգանում հողատիրութիւնը.

Դէպի Շատ Խոշո՞րը (10,000–20,000 դեսիատինից աւելի)։

Դէպի Խոշո՞րը (1000–ից 10,000)

» Միջի՞նը (100–ից 10,000)

» Փո՞քր (10 ից 100)

» Շատ Փո՞քրը (1 դեսիատինից վար)

Զ. — Ի՞նչ արժէ հողը այժմս։

Արժէքը աւելանո՞ւմ է, թէ՞ պակասում։

Ի՞նչ արժէր մի դեսիատին հողը սրանից 5, 10, 20 և 30 տարի առաջ։

Է. — Խոշոր կալուածատէրերը իրե՞նք են մշակում իրենց կալուածները, թէ՞ վարձու են տալիս։

Եթէ իրենք են մշակում, ապա ի՞նչպիսի և ի՞նչքան գործաւորներ ու պաշտօնեաներ են պահում։

Ը. — Եթէ կալուածատէրերը իրենք չեն մշակում իրենց հողերը և վարձու են տալիս, — ապա ի՞նչ պայմաններով և ի՞նչ գնով։

Թ. — Ձեր շրջանում կալուածատիրական գիւղեր կա՞ն. — տուեցէք թիւը և անունները։

Փոխադարձ ի՞նչ պայմաններ կան կալուածատէրերի և գիւղացիների միջև։ Տուեցէք համառօտ տեղեկութիւններ։

Ժ. — Հողային սեպհականութեանց վրայ ինչ հարկեր և տուրքեր կան. մանրամասնեցէ՛ք։ — Ինչ տարապարհակ աշխատութիւններ ունիք։

ԺԱ.— Ասացէք մի քանի խօսք հողերի բեղմնաւորութեան մասին։

ԱԳԱՐԱԿԱՊԱՆՆԵՐ ԵՒ ՄԱՐԱԲԱՆԵՐ

Ա. — Ձեր շրջանի մէջ ագարակապաններ (fermier, վարձակալ,) կա՞ն. ինչքան. քանի՞ դեսիատինի է հասնում նրանց շահագործած հողը։

Ի՞նչ պայմաններով։

Բ. — Ձեր շրջանի մէջ կա՞ն մարաբաններ (métayer)։ Ինչքան։ Ինչ կարգադրութիւն ունեն նրանք հողատէրերի հետ. — գրաւոր պայմանագրութիւն կա՞յ, թէ՞ ամէն ինչ բերանացի է կատարւում։

Հողերի շահագործման մէջ միայն մարաբանե՞ր են բերում իրենց տաւարը, գործիքները և սերմացուն, թէ՞ հողատէրն էլ է սերմացուի կէսը տալիս։

Կը պատահի՞ որ ամբողջ սերմացուն հողատէրը տայ։

Հողատէրը մարաբային տալի՞ս է և՛ բնակարան։

Մարաբայի և հողատէրերի միջև կայացած պայմանագրութեան մի օրինակ նոյնութեամբ կցեցէք ձեր տեղեկագրին՝ եթէ կայ։

Ձեր շրջանում մարաբանների թիւը հետզհետէ շատանո՞ւմ է, թէ՞ նուազում։ — Միջին հաշուով՝ ամէն մի կալուածատէր քանի՞ մարաբա ունի։

ՎԱՆՔԱՊԱՏԿԱՆ ԵՒ ՎԱԳՖ ՀՈՂԵՐ

Ա. — Ձեր շրջանում վանքապատկան կամ վագֆ վարելահողեր, արօտատեղիներ, անտառներ. . . կա՞ն։ Ինչքան է այդ բոլորի տարածութիւնը։ Ո՞վ է շահագործում։

Բ. — Վանքապատկան կամ վագֆ գիւղեր կա՞ն։ Ինչ պայ-

մաններով են շահագործում գիւղացիները։ Իւրաքանչիւրը ո՞րքան տարածութիւն ունի այդ հողերից. մանրամասնեցէ՛ք։

ՊԵՏԱԿԱՆ ՀՈՂԵՐ

Ա. — Ձեր շրջանում կա՞ն պետական հողեր (արազի էմիրիէ)։ Պետական հողերի վրայ հաստատուած ի՞նչքան գիւղեր կան. — անուանեցէ՛ք։ Ի՞նչ պայմաններով են օգտուում գիւղացիք այդ հողերից։ — Աշխատեցէ՛ք ճշտիւ տալ իւրաքանչիւր գիւղացու այդպիսի հողերից օգտուած տարածութեան չափը։

ԱԶԱՏ ՀՈՂԵՐ

Ա. — Ձեր շրջանում կա՞ն ազատ (արազի մէվատ, չբռնուած, չգրաւուած) հողեր. ի՞նչքան է դրանց տարածութիւնը մօտաւորապէս։ Կարելի՞ է օգտուել այդ հողերից. ինչի՞ համար։ Սեպհականացնելու կամ շահագործելու առանձին արգելքներ կա՞ն. — ի՞նչ։

ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹԻՒՆ

Ա. — Ձեր շրջանում կա՞յ համայնական հողատիրութիւն (արազի մէթրուքիէ)։

Համայնական հողատիրութիւնը քայքայո՞ւմ է. ի՞նչպէս։

Կա՞ն անտառներ, արօտատեղիներ, մշակելի հողեր, ջրաւազաններ, և այլն, որ միմիայն համայնքին պատկանեն։

Բ. — Ի՞նչքան է այդ հողերի տարածութիւնը։

Ի՞նչպէս են շահագործում։

Այդ բոլորը ամբողջ համայնքի տրամադրութեան տա՞կն է գտնուում։

Համայնական հողերը ի՞նչպէս են բաժանում բնակիչներին. — լուծքի՞, թէ՞ չունչի համեմատ։

Համայնքին պատկանող հողերը տրուո՞ւմ են սոսկական անհատի՝ շահագործման համար. — ի՞նչ պայմանով։

Կա՞ն օրինակներ, երբ համայնքը ինքը հողերը շահագործէ և արդիւնքը բաժանէ. — ի՞նչ ձեւով։

Հողերը ուղղակի համայնական թէ՞ անհատական բնաւորութիւն ունեն։

Համայնական հողերը մեծացնելու միտում կա՞յ։ Համփայի, կէս համփայի և քառորդի դրութիւն կա՞յ ձեր շրջանում։ — Նկարագրեցէք այդ դրութիւնը իւր բոլոր մանրամասնութեան մէջ՝ եթէ կայ։

ՍԱԿԱՒԱՀՈՂՈՒԹԻՒՆ

Ա. — Ձեր շրջանում սակաւահողութիւն կա՞յ. — եթէ այո՛, տուեցէք պատճառները։ — Սակաւահող գիւղացիները ի՞նչ կերպով են լրացնում իրենց պիտոյքները. — մանրամասնեցէք։

Բ. — Գիւղացուն բաւականաչափ հող ունենալու, և իր վիճակը շատ ու քիչ բարւոքելու համար, ի՞նչ միջոցներ էք առաջարկում՝ ձեր շրջանում։

ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ա. — Գիւղերի ազգաբնակչութիւնը աւելանո՞ւմ է, թէ՞ պակասում. — բերեցէ՛ք օրինակներ։

Բ. — Ինչի՞ն էք վերագրում այդ նուազումը կամ աւելացումը։

Գ. — Երիտասարդները ընդհանրապէս գիւղն են մնում, թէ՞ քաղաքները պանդխտում։

Դ. — Տնով-տեղով գաղթողներ կա՞ն. տուեցէք գաղթականութեան և պանդխտութեան պատճառները։ — Ջինուորական ծառայութիւնից արձակուած երիտա-

սարդները աւելի նախընտրում են գիւղը մնալ, թէ քաղաքները երթալ։

Ե. — Ձեր շրջանից ուրիշ տեղեր աշխատանքի համար պանդխտողների թիւը որքանի է հասնում. և որքան վերադարձողներինը։ Երկու պարագային էլ աչքի առաջ ունեցէք 1, 2, 3, 4 և 5 տարուան շրջաններ։

Զ. — Դրսից եկողներ (մուտքիր) կա՞ն ձեր շրջանում։ Հողային խնդիրների տեսակէտից ի՞նչ հետեւանք ունեցաւ այդ ներգաղթը։

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա. — Ձեր շրջանում երկրագործական ի՞նչ արտադրութիւններ կան. — խաղո՞ղ, ցորե՞ն, գարի՞, կորե՞կ, եգիպտացորե՞ն, — վարսա՞կ, գլգը՞լ, խո՞տ, ճակնդե՞ղ, գետնախնձո՞ր, բրինձ... կա՞թ, կարա՞գ, պանի՞ր... ծխախո՞տ...

Զոր մրգեղէններ... բանջարեղէններ... ծառե՞ր... փա՞յտ... ծաղի՞կ... ձիթենի՞, թթենի՞, բամբա՞կ, ... ձի՞, կո՞վ, ե՞զ, ոչխա՞ր, գոմէ՞շ, խո՞զ, հնդկահա՞ւ, սա՞գ, բա՞դ, հա՞ւ, աղաւնի՞ ... — անուանեցէք մանրամասնօրէն.

Տեղեկագրեցէք թէ ի՞նչ բերքեր և արտադրութիւններ յատուկ են միայն ձեր շրջանին։

Ո՞րքան է ստանում Շատ Փոքր, Փոքր, Միջին, Խոշոր և Շատ Խոշոր հողատիրութիւնը այդ արտադրութիւններից։

Դրանց շահագործումը ի՞նչքան արժէ տէրերի համար։

Արտադրութեան տեսակի մէջ ձեւափոխութիւն կա՞յ (օրինակ՝ հացաբոյսերի համար եղած վարելահողերը մարգագետնի վերածուած, այգիներ՝ զանազան հացաբոյսերի, թթաստաններ՝ փոխանակ արօտավայրի, և այլն)։

Բ. — Մշակութեան համար ինչ կենդանիներ են գործածւում. թուով որքան։

Կան աշխատաւորներ. ինչքան։

Ինչ է աշխատանքի պայմանները։

Գ. — Թուեցէք թէ հողի մշակութեան տեսակէտով ինչ բարելաւութիւն կայ յառաջացած ձեր շրջանում։

Դ. — Ձեր համայնքի կամ շրջանի մէջ կան տիրող սովորութիւններ, որոնց համաձայն գիւղացիները իրարու փոխադարձ ծառայութիւններ մատուցանեն տարուայ յայտնի ժամանակներում. օրինակ՝ «փոխարայ բանել», «միջին», «խապ», («փոխ տալ»), և այլն։

Երկրագործական գործիքներ, կենդանիներ իրարու փոխ տալու սովորութիւններ կան, — նկարագրեցէք մանրամասնօրէն։ —

Ե. — Արտադրողները իրենց արտադրոյթը ուղղակի սպառողին են վաճառում, թէ միջնորդների։

Նկարագրեցէք հանգամանօրէն շրջապատող շուկաների բնաւորութիւնը, ծախելու եղանակը և գինը։— Տեղական և պարբերական տօնավաճառներ՝ (հաւթաբազարներ) կան։

Կազմեցէք արտադրութիւնների մանրամասն տեղեկագիրը, նշանակեցէք վաճառականական և տնտեսական տագնապների մասին, ցոյց տուեցէք սրանց բնորոշող դրդապատճառները, գոյութիւն ունեցող մրցակցութեան բնաւորութիւնը։

Զ. — Ձեր շրջանի որ արտադրութիւնը աղգաբնակչութեան պէտքերին լիովին բաւարարութիւն է տալիս. որը՝ ոչ։

Ինչ է արտահանւում, և որ, ինչ է ներմուծւում, և որտեղից։

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ

Ա. — Շատ Փոքր, Միջին, Խոշոր և Շատ Խոշոր հողատէրերը օգտուո՞ւմ են երկրագործական ներկայ մեքենաներից։

Բ. — Ինչ գործիքներ են գործածուում. — պարզ արօր, գութան, մանգեռ, տափան, մանգաղ, ջարջառ, կամն, փոցխ, գերանդի, բահ, հոսլի, մատիկ. . . .

Ձեր շրջանում գործ են ածում երկրագործական նորագոյն մեքենաներ և գործիքներ, — ինչպէս են՝ երկխոսի, բազմախոսի և խորահերկիչ արօրներ, կամնող մեքենայ, ցանող մեքենայ, արմատներ տնկող մեքենայ, պարարտացուցիչ նիւթեր սփռող մեքենայ, հնձող մեքենայ, քամու տուող (էրան անող) մեքենայ, նորագոյն տրմուղ, բամբակի մեքենայ, և այլն։

Գ. — Այդ հողատէրերը գործ են ածում էլէքտրաշարժիչներ (moteur), պետրոլաշարժիչներ կամ գազաշարժիչներ։

Գահավիժող ջրերի ուժից օգտուողներ կա՞ն ձեր շրջանում. ինչի՞ համար։

Ձեր շրջանում կա՞ն օրինակներ, երբ համայնքի բոլոր անդամները միասին, կամ նրա փոքր արտադրող մասը միայն, իրարու հետ միանալով՝ նորագոյն երկրագործական մի կամ մի քանի մեքենաներ գնեն ընդհանրութեան գործածութեան համար։

Ի՞նչ տեսակի են այդ մեքենաները։

Դ. — Այդ գործիքներից և մեքենաներից ամէնքը հաւասարապէս կարող են օգտուել, թէ՞ միայն գնելուն մասնակցողները. իսկ գնելուն չմասնակցողներին կամ կարողութիւն չունեցողներին վարձու կամ ձրի օգտուելու տրո՞ւմ է։

Ե. — Ձեր շրջանի բոլոր տեսակի արտերը ջրարբի՞ են, թէ՞ անջրդի։

Ոռոգման գործը ի՞նչ հիմունքների վրայ է դրուած. — Ջրաբաշխ (ջիւար) պահելու սովորութիւն ունէ՞ք։ Համփայի, կէս համփայի և քառորդի իրաւունքով ջրերից օգտուելու դրութիւն կա՞յ. — նկարագրեցէք մանրամասնօրէն։

Կա՞ն ձեր շրջանում հաւաքական կազմակերպութիւններ (ընկերակցութիւններ) ջրերից օգտուելու՝ մշակութեան համար։

Զ. — Գինեգործութեան համար ինչ անօթներ և գործիքներ կան ձեր շրջանում. — Փոքր, Միջին և Խոշոր սեպհականատէր այգեգործները ունին իրենց տրամադրութեան տակ նորագոյն ճմլիչ և քամիչ մեքենաներ. . .

Է. — Այգեկութի ինչ սովորութիւններ կան։

Արտերից հասկաքաղ անելու և կթուած (քաղուած) այգիներից «ճրճոտ անելու» (ճռաքաղ անել, պտուղ անել) սովորութիւններ դեռ կան։ — Ուրիշ ինչ սովորութիւններ, որ «չունեցողները» օգտուէին։

ՊԱՐԱՐՏԱՑՈՒՑԻՉ ՆԻՒԹԵՐ, ՍԵՐՄ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա. — Ձեր շրջանում պարարտացուցիչ նիւթեր գո՞րծ են ածում. ինչ նիւթեր և ո՞րտեղից։

Բ. — Անասունների, հացաբոյսերի, ծառերի և որթատունկերի ինչ հիւանդութիւններ ու հարուածներ են պատահում յաճախ. — ինչ հետևանք են յառաջացնում այդ բոլորը։

Ասացէք մի քանի խօսք կլիմայի և հողի տեսակի մասին։

Գ. — Սերմերը տեղակա՞ն են, թէ՞ դրսից բերուած. սերմերը աշնուացնելու միտումն կա՞յ։ Սերմեր ցանելու ինչ եղանակներ կան ձեր շրջանում։ Ո՞ր տեղի սերմերին էք գերազանցութիւն տալիս. ինչո՞ւ։

Դ. — Ընդհանուր միտում կա՞յ հունձը ապահովագրել՝ հրկիզումի, կարկտի, մորեխի. . . դէմ։ Տաւարները ապահովագրելու սովորութիւն կա՞յ.

Ապահովագրական ընկերութիւններ կա՞ն ձեր շրջանում. — ինչ է ապահովագրութեան սակագինը։

ԳՐԱՒԱԴՐՈՒՄՆԵՐ, ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՎԱՐԿ

Ա. — Հողատէրերը իրենց հողերը գրաւի դնելու սովորութիւն ունի՞ն (Շատ Փոքրե՞ր, Փոքրե՞ր, Միջիննե՞ր, Խոշորնե՞ր, Շատ Խոշորնե՞ր)։

Որո՞նց մօտ են գրաւի դնում ընդհանրապէս։

Բ. — Ո՞վ է փոխ դրամ տալիս երկրագործին. կա՞ն բանկային հաստատութիւններ այդ նպատակի համար. ի՞նչ է տոկոսը. ի՞նչպիսի վաւերաթղթերով է փոխատուութիւնը կատարւում. քանի՞ արժէ այդ բոլորը։

Գ. — Պարտքի փոխարէն անշարժ կայքերի գրաւումն յաճա՞խ է պատահում։

Հարուածը հողատէրերի ո՞ր տեսակին է աւելի պատահում.

Ի՞նչպէս և ի՞նչ գնով է լինում վաճառումը։

Դ. — Կա՞ն ձեր շրջանում վարկային հաստատութիւններ, ունե՞ն նրանք հողեր, որ խլուած լինէին գիւղացիների պարտքի փոխարէն ու այդ բոլորը չահագործուէին նոյն այդ հաստատութիւնների կառավարիչների և պաշտօնեաների ձեռքով։

ԳՈՐԾԱԿՑԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա. — Ձեր շրջանի մէջ Երկրագործական Գործակցական ընկերութիւններ կա՞ն։

Բ. — Այդ Գործակցական ընկերութիւնները արտադրութեա՞ն նպատակով են, թէ՞ իրենց արտադրութիւնները ծախելու կամ պարարտացուցիչ նիւթեր և կամ մեքենաներ ձեռք բերելու համար են, և այլն։

Գ. — Բաղկացած են դրանք Խոշոր, Միջին, թէ՞ Փոքր մշակողներից։

Տուեցէ՛ք գործնական մանրամասնութիւններ այդ ընկերակցութիւնների նպատակների և գործառնութիւնների մասին։

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՊՐՕԼԵՏԱՐԻԱՏԸ

Ա. — Երկրագործական գործաւորները ի՞նչ դրութիւն ունին ձեր շրջանում։

Բարելաւուո՞ւմ է նրանց վիճակը, թէ՞ վատթարանում։

Բ. — Նրանց թիւը շատանո՞ւմ է, թէ՞ քչանում։

Ձեր շրջանի մէջ՝ երկրագործական աշխատանք կատարելու համար՝ աշխատաւոր բաղուկների առաւելութիւն թէ՞ պակասութիւն կայ։

Գործաւորները (մշակ, սարակ,) ի՞նչպէս են վարձւում՝ օրուա՞ն, շաբթուա՞ն, ամսուա՞ն, տարուայ մի եղանակի՞, թէ՞ ամբողջ տարուայ համար։

Տուեցէք համառօտ տեղեկութիւններ մաճկալների, հօտաղների, նախրապանների, հովիւների, հորթարածների, ուլարածների և ծառաների մասին։

Ե. — Ձեր շրջանի մէջ օրական ի՞նչքան ապրուստի դրամ է պէտք երկրագործական մի գործաւորի համար։— Մշակի, սարակի, քաղուորի... հացը իրենից է թէ՞ գործատէրից։

Զ. — Երկրագործային գործաւորները տուն, պարտէզ, հող ունե՞ն։

Ի՞նչքանի կը հասնի դրանց արժէքը։

Ի՞նչ արդիւնք են ստանում իրենց հողից։

Նկարագրեցէք լուծք չունեցողների, «ճըվալակներ»ի, «ճիպոտահօտաղներ»ի դրութիւնը, ինչպէս և հանտապահների (ղօրուխչիների)։

Է, — Ձմեռուան և ամառուան վարձագների մէջ տարբերութիւն կա՞յ։

Ի՞նչ տարրից է բաղկանում վարձադրութիւնը, — բերքով թէ՞ դրամով, թէ՞ կէս մաս դրամ, կէս մաս բերք։

Ը. — Ձեր շրջանում կա՞ն գործաւորներ, որ գալիս են ուրիշ շրջաններից կամ հեռաւոր տեղերից, որոնք միայն ժամանակաւորապէս են աշխատում՝ հունձքի, այգեկութի, այգիները փորելու, բոստաններ ցանելու համար, և այլն, և ապա վերադառնում են իրենց տեղերը։

Ո՞ր շրջաններից են գալիս։

Թ. — Օրական քանի՞ ժամ են աշխատում երկրագործական աշխատաւորները։

Ժ. — Երկրագործական աշխատաւորների համար կողմնակի ուրիշ զբաղմունքներ կա՞ն, ի՞նչ։

ԺԱ.— Երկրագործական աշխատանքների համար՝ կին, աղջիկ, տղայ գո՞րծ է ածւում։

ԺԲ.— Տղաները քանի՞ տարեկանից են սկսում աշխատիլ. ի՞նչ է նրանց գործը։

ԺԳ.— Երկրագործական բերքերի տեղափոխութիւնները ինչերո՞վ են կատարւում.— սայլերո՞վ, անասուններո՞վ...։

ԺԴ.— Ասացէք մի քանի խօսք թէ գիւղական գործաւորների և թէ գիւղացիների բարոյականութեան մասին՝ մանրամասն թուելով գոյութիւն ունեցող արատները. այդ արատները վերացնելու ի՞նչ միջոցներ էք առաջարկում։

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՍԷՆԴԻԿԱՏՆԵՐ

Ա. — Ձեր շրջանում երկրագործական կամ գինեգործական սէնդիկատներ կա՞ն։

Ո՞րքան է դրանց թիւը, ո՞րքան են մասնակցողները։

Սէնդիկատները կազմում են Փո՞քր, Միջի՞ն, Խոշո՞ր սեպհականատէրերը, թէ՞ դրանք կալուածատէրերի պարզ սէնդիկատներ են, որ նպատակ ունեն իրենց շահերը պաշտպանել գործաւորների դէմ. թէ՞ դրանք գործաւորական սէնդիկատներ են՝ տէրերի դէմ պաշտպանուելու համար։ Կա՞ն խառն սէնդիկատներ, այսինքն գործաւորներից և սեպհականատէրերից բաղկացած։

Բ. — Եթէ երկրագործական գործաւորական սէնդիկատներ կան, ցոյց տուեցէք նրանց բերած փոփոխութիւնները գործաւորի վարձագնի և աշխատանքի պայմանների թեթեւացման մասին։

Գ. — Եղե՞լ են գործադուլներ երկրագործական գործաւորների կողմից։

ՀԱՆԱՀԱՆ

Ա. — Ձեր շրջանի մէջ քաղաքական ինչ կուսակցութիւններ կան։

Աղգաբնակչութեան ո՞ր մասն է նրանց ծրագրին յարած։

Փոքր սեպհականատէրերը յարե՞լ են սոցիալիզմին։

Բ. — Գիւղական ընթերցարաններ, գրադարաններ ունի՞ք։

Գ. — Ունի՞ք կրթական ընդհանուր և երկրագործական մասնաւոր հաստատութիւններ։ Ի՞նչ տեսակ։

Դ. — Ձեր շրջանում շրջիկ դասախօսներ գալի՞ս են.—ինչ նիւթեր են աւելի հետաքրքրում գիւղացիներին։

Ե. — Կա՞ն տիպար ագարակներ, տնկարաններ, անասնաբուժարաններ, հիւանդանոցներ, և այլն։

Զ. — Երկրագործական մասնագիտական (պրոֆէսիոնալ) կրթութիւնը ինչ վիճակի մէջ է։

Է. — Պետական պիւտջէից ինչ գումար է յատկացուած ձեր շրջանի երկրագործական պէտքերին։

Երկրագործութեան հետ կապ ունեցող պետական ինչ ձեռնարկներ կան։

Ը. — Ձեր շրջանում հասարակական շտեմարաններ կա՞ն։

Թ. — Բացակայականութեան (absentéisme) երեւոյթը մեծ ծաւալ ունի՞ ձեր շրջանում։

Ժ. — Կա՞ն հարցեր որ ներկայ հարցարանի մէջ անտես են առնուած։

[Արտատպուած «ՀՆՉԱԿ»ից, № 7, 1907]

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԱԶԳ. ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0015542

Ser. 504.

A II
10676